Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

949
577
619բ
167

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ Խ. Ս. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՈՐԻՆՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱ ԱՆՏԱՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ
1926

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ Խ. Ս. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱ ԱՆՏԱՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ
1926

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

*Գրաւ.* № 356 *բ.* *Տիրաժ* 125. *Պատ.* № 2315.
*Տպագրական տրեստի 2-րդ տպարան, Յերևան*

*Հաստատված է Հ. Խ. Ս. Հ. Հողագործության Ժողովրդական Կոմիսար Ցերընկյանի կողմից 10 դեկտ. 1925 թ.*

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Խ. Ս. Հանրապետության Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի Անտառային Վարչության տնորինության յենթակա անտառապետությունների**

1.

Հոդ. 1. Հողժողկոմատի Անտառային Վարչության տնորինության յենթակա Պետական անտառային ֆոնդը բաժանվում է Վարչա-տնտեսական առանձին միավորների, վորոնց տրվում է անտառապետություններ անունը: Անտառապետությունները բաժանվում են պահաբաժինների.

Հոդ. Պետական անտառային ֆոնդը բաժանվում է անտառապետությունների ըստ՝

ա) փայտանյութի սպառման պայմանները,

բ) անտառների բնույթի և նշանակության,

գ) առանձին անտառամասերի տարածության,

դ) ազգաբնակության խտության և անտառների նկատմամբ գյուղերի ունեցած դասավորության,

յե) յերկաթուղային և ջրային փոխադրական միջոցների,

զ) անտառային անտեսության վրա ազդող վարչա-տնտեսական ուրիշ կարևոր հատկանիշների.

Հոդ. 3. Անտառապետությունների անվանումը, տարածությունն ու սահմանները վորոշում է Հողժողկոմատը:

Հոդ. 4. Անտառապետություններն ունեն իրենց դրոշմակնիքը, սահմանված շտամպը և ծառերի դրոշմիչը:

Հոդ. 5. Տնտեսությունը և անտառային գործերը վարում են անտառապետները, վորոնք պետք ունենան անտառին հատուկ կրթություն և գործնական բավարար փորձառություն. անտառապետներն ունենում

են ոգնականներ նույնպես մասնագիտա-կան պատրաստությամբ։

Հոդ. 6. Անտառապետները պատասխա-նատու են հանձնարարված ամբողջ անտա-ռապետությունների համար և պարտավոր են կանոնավոր տնտեսություն վարել այդ անտառապետություններում, անտառից ա-ռավելագույն արդյունք ստանալու, հատա-տեղեր վերականգնելու, մատղաշ ծառերի խնամքի և ծառերի տարեկան աճումը լը-րիվ և նպատակահարմար յեղանակով օգ-տագործելու համար ձեռք առնել բոլոր հը-նարավոր միջոցները։

Հոդ. 7. Անտառների պաշտպանությունն ըստ պահարաժինների իրագործում է ան-տառային պահախումբը, հանձին անտա-ռապահների։

Հոդ. 8. Տնտեսության հաշվառումը, գործավարությունը և նյութեղենի դրամա-կան հաշվետվությունը հանձնարարվում են անտառապետությունների դիվաններին, վո-րոնց հաստիքները վորոշվում են սահման-ված կարգով, նայելով թե յուրաքանչյուր

անտառապետության տնտեսություն · որը չափով ինտենսիվ է։

Հոդ. 9. Անտառապետներին և նրանց օգնականներին պաշտոնի յե ընդունում, տեղափոխում և արձակում Հողժողկոմատը Անտառային Վարչության դիմումով։

Հոդ. 10. Անտառապահներին, գրասենյակային ծառայողներին պաշտոնի յեն ընդունում, տեղափոխում և արձակում անտառապետները գործող օրենքների հիման վրա և այդ մասին հայտնում են Հողժողկոմատին։

Հոդ. 11. Պաշտոնական փոխ-հարաբերությունների տեսակետից անտառապետներն անմիջականորեն յենթարկվում են Հողժողկոմատի Անտառային Վարչության, իսկ անտառապետների օգնականները, անտառային պահակախումբը և գրասենյակային ծառայողները անտառապետներին։

Հոդ. 12. Անտառապետներին իրավունք է վերապահվում համապատասխան ֆին-օրգաններից անմիջականորեն ստանալ այն վարկերը, որ Հողժողկոմատի Անտառային Վարչությունը հատկացնում է նրանց՝ ան-

տառապետներին անտառային տնտեսու-
թյան կարիքները հոգալու համար։ Անտա-
ռապետները պարտավոր են հիշյալ վարկե-
րը գործադրել ուղիղ նպատակին։

Հոդ. 13. Անտառապետները, օգնական-
ները և անտառային պահախումբն իրավունք
ունեն հագնելու սահմանված համազգեստ։

Հոդ. 14. Անտառապետները, օգնական-
ները և անտառային պահախումբն հրացեն
են կրում և օգտվում են անտառախախ-
տումների գործերի հետաքննության մար-
միններին վերապահված իրավունքներով։

Հոդ. 15. Անտառապետները, օգնական-
ները և անտառային պահախումբն ազատ-
վում են վորսորդական տուրքից։

Հոդ. 16. Անտառապետության բոլոր
ծառայողներն իրավունք ունին ձրիաբար՝

ա) ստանալ բնակարաններ, յեթե ան-
տառապետության մեջ կան բնակելի ազատ
շենքեր։

և բ) ստանալ վառելափայտ, ըստ վո-
րում վառելափայտի պատրաստման և տե-
ղափոխության հետ կապված ծախքերը հո-
գում են ստացողները։

Հոդ. 17. Բոլոր անտառաշխատակիցներին արգելված է անտառի շահագործումով զբաղվելու։

## 2. ԱՆՏԱՌԱՊԵՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Ա. Անտառապետների պարտականությունները

Հոդ. 18. Անտառապետները պարտավոր են իրենց հանձնած անտառապետությունների հետ բազմակողմանի կերպով ծանոթանալ, հատակագծման նյութեր չլինելու դեպքում կատարել անտառամասերի թռուցիկ հետազոտություն, կազմել գծագրեր և ծառատունկերի նկարագիր։

Հոդ. 19. Անտառապետները կազմակերպում են իրենց հսկողությանը հանձնված անտառապետությունների կանոնավոր պաշտպանության գործը, որպեսզի անտառային տարածություններ չխլվեն, ինքնագլուխ ծառահատումներ չլինեն, առանց

թույլտվության անասուններ չարածացնեն, ապօրինաբար կողմնարդյունքները չօգտագործվեն, հրդեհներ չպատահեն և այլն, ինչպես նաև հսկողություն են կազմակերպում, որ անտառապետության սահմաններում վորսորդական կանոնները անշեղ կիրառվեն:

Հոդ. 20. Անտառապետները պարտավոր են կանխել անտառախախտումներ, հետաքննություն կատարել և հետապնդումն հարուցել վարչական և դատական կարգով:

Հոդ. 21. Անտառապետներն իրենց խնամքին հանձնված անտառապետությունների համար սահմանված ժամանակամիջոցում կազմում են՝ ա) անտառային տնտեսության պերսպեկտիվ և գործնական ծրագիր, բ) փայտեղեն բաց թողնելու նախահաշիվներ:

Հոդ. 22. Հատման տեղերը հատկացնում և փայտեղենը գնահատում են անտառապետները—ստուգելով, թե վորքան ուղիղ է կատարված ծառահամարը:

Հոդ. 23. Անտառապետները պարտավոր են՝

ա) Բաց թողնել ծառեր արմատի վրա Անտառային Օրենսգրքի համապատասխան հրահանգների ու կարգադրությունների համաձայն։

բ) Ստուգել փայտեղենի պատրաստումները և հատման տեղերը։

գ) Անտառապետի օգնականների և անտառապահների միջոցով սույն կանոնադրության 50 հոդվածով նախատեսված կարգով կազմակերպել փայտեղենի և հատման տեղերը։

Հոդ. 24. Անտառապետները հսկում են, որ կանոնավոր հատվեն ծառերը, փայտանյութերը մշակվեն ռացիոնալ յեղանակով և հատման տեղերը մաքրվեն պատշաճ ձեվով։

Հոդ. 25. Անտառապետներն իրենց խնամքին հանձնված անտառապետությունների սահմաններում կազմակերպում են՝

ա) Կողմնակի օգտագործումները և հասույթաբեր աղբյուրները,

բ) Որսորդական կանոնավոր տնտեսություն։

Հոդ. 26. Անտառապետները պարտավոր

են՝ ա) կատարել անտառաշինարարական նախապատրաստական աշխատանքներ և աջակցել անտառաշինարարական խմբերին անտառապետություններում աշխատելու միջոցին, բ) կատարել գործառնական ծրագրերով կամ Անտառային Վարչության առանձին կարգադրություններով նախատեսված անտառային և անտառկրթական աշխատանքները։

Հոդ. 27. Անտառապետները կատարում են անտառապետություններում տեղի ունեցած բոլոր տեսակի օգտագործումներին և գործառնություններին վերաբերվող դրամական հաշվարկները, ընդունում են վճարները և ֆինօրգաններին են հանձնում սահմանված կարգով։

Հոդ. 28. Անտառապետները պարտավոր են կազմել անտառապետությունների գույքի լրիվ ցուցակը և միջոցներ ձեռք առնել այդ գույքի պահպանության համար։

Հոդ. 29. Անտառապետները կազմակերպում են գործավարությունը և դրամական ու նյութեղենի հաշվետվությունները։

Հոդ. 30. Անտառապետները պարտավոր

են հրահանգներ տալ իրենց յենթակա պերսոնալին և հսկել վերջինիս գործունեության վրա,

Հոդ. 31. Անտառապետները սահմանում են անտառապետության բոլոր ծառայողների անելիքները և մշակում են ներքին կարգապահության կանոններ, կազմակերպում են աշխատանքի պաշտպանությունը անտառապետությունների համար։ Հողժողկոմատի ու Հողանտառ Արհմիության կոմիտեյի հրատարակած և աշխատանքի Կոմիսարիատի կողմից 1924 թ. սեպտեմբերի 19-ին հաստատված ներքին կարգապահության կանոնների համաձայն անտառապետությունների բոլոր ծառայողների միջև աշխատանքի բաժանում են կատարում։

Հոդ. 32. Անտառապետները պարտավոր են իրենց անտառապետությունների շրջանում կազմակերպել անտառպրոպագանդայի գործը (անտառային անկյուններ խրճիթ-ընթերցարաններում, «Անտառային օր», դասախոսություններ և այլն)։

## Բ. Անտառապետների իրավունքները.

Հոդ. 33. Անտառապետներն իրավունք ունեն Հողժողկոմատի Անտառային Վարչության գոյություն ունեցող օրենսդրության և հրահանգների սահմաններում, չխախտելով կանոնավոր անտառապետության հիմունքները, կիրառել գործառնական ծրագրով չնախատեսված ձեռնարկումներ, յեթե միայն վերջիններս նպաստում են անտառների դրության բարելավման և նրանց արդյունաբերության բարձրացման։

Հոդ. 34. Անտառապետներին ներկայացուցչական իրավունք է վերապահվում անտառապետությունների գործերով հանդես գալու վարչական, դատական և արհեստակցական բոլոր հիմնարկներում։

Հոդ. 35. Անտառապետներին իրավունք է տրվում Հողժողկոմատի Անտառային Վարչության համապատասխան հրահանգներով և կարգադրություններով իրանց վերապահված լիազորությունների սահմաններում զանազան պայմանագրեր կնքելու։

Հոդ. 36. Անտառապետներն իրավունք ունեն օրենսգրքով նախատեսված դեպքերում անտառապետության հասանելիք գումարները գանձելիս հարկադրական միջոցներ ձեռք առնել, ինչպես և բռնագրավել փայտանյութերը և այլ անտառային նյութերը։

37. Անտառապետներն իրավունք ունեն անտառապետության վերաբերյալ խնդիրների առթիվ անմիջականորեն հարաբերության մեջ մտնել Անտառային վարչության, տեղական բոլոր հիմնարկների և պաշտոնատար անձանց հետ։

Հոդ. 38. Անտառապետներն իրավունք ունեն անտառապետության բոլոր պաշտոնյաներին վարչական պատասխանատվության ենթարկել սույն կանոնադրության 30 հոդվածում հիշատակված անտառապետությունների ներքին կանոնադրությունների խախտումների դեպքում։

### 3. Անտառապետների ոգնականների իրավունքներն ու պարտականու- թյունները.

Հոդ. 39. Անտառապետների ոգնական-ներն անտառապետներին փոխարինում են նրանց արձակուրդների, գործուղումների, հիվանդությունների և անտառապետների հանձնարարությամբ բոլոր այլ դեպքերում։

Հոդ. 40. Անտառապետների ոգնական-ներն անտառապետների հանձնարարու-թյամբ ու ղեկավարությամբ կատարում են անտառապետության այն բոլոր աշխա-տանքները, վորոնք մատնանշված են սույն կանոնադրության 18—31 հոդվածներում։

Հոդ. 41. Անտառապետների ոգնական-ները կատարում են անտառապետության վերաբերյալ զանազան արտանկարման և գծագրական աշխատանքներ։

Հոդ. 42. Անտառապետների ոգնական-ները մասնակցում են անտառապետության տարեկան և ամսական հաշվետվություննե-րի կազմելուն։

Հոդ. 43. Անտառապետների ոգնական-ները անտառապետների հանձնարարու-

թյամբ վարում են անտառապրոպագանդա-
յի գործը, անմիջականորեն մասնակցում «Անտառ—Որվա» կազմակերպման և անտառապետության վերաբերյալ զեկուցումներ տալիս գյուղխորհուրդներում, պլենումներում, պրոֆմիության կազմակերպություններում:

Հոդ. 44. Անտառապետների օգնականները անտառապետների լիազորությամբ իրավունք ունեն անտառապետության վերաբերյալ բոլոր գործերով հանդես գալ դատարաններում և վարչական հաստատություններում:

Հոդ. 45. Անտառապետների օգնականները իրավունք ունեն սույն կանոնադրության 31 և 38-հոդվածների համաձայն անտառապետին դիմել պատասխանատվության ենթարկելու անտառային պահակներին։

**Անտառապետության գրասենյակային պաշտոնյաների պարտականությունները.**

Հոդ. 46. Անտառապետության գրասենյակին հանձնվում է անտառապետու-

թյան անտեսության հաշվառքը, անտառահատման և այլ տոմսերի դուրս գրելը, սահմանված ձևով դրամական և նյութեղենի մուծումները վարելը. զանազան պահանջացուցակների, ավանսի հաշիվների, պահանջագրերի և այլ դրամական փաստաթղթերի, ամսական, տարեկան և այլ հաշիվների կազմելը, գործերի, թղթերի, բլանկների և այլ փաստաթղթերի պահելը, ինչպես և անտառապետության ընթացիկ գրագրությունների վարելը:

Հոդ. 47. Անտառապետության գրասենյակային ծառայողների աշխատավարձը տրվում է անտառապետությունից:

**Անտառային պահախմբերի իրավունքներն ու պարտականությունները.**

Հոդ. 48. Անտառապետի և նրա օգնականի ղեկավարությամբ անտառային պահակի անմիջական պարտականությունն է պահպանել իրեն հանձնված պահաշրջանը, հսկել հրդեհի դեմ սահմանված ձեռնարկումի կատարման վրա, միջոցներ ձեռնարկել կանխելու անտառին սպառնող վնասները-

A 9895
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

հետապնդել և ձերբակալել անտառային որենքները խախտողներին, նրանց վրա արձանագրություններ կազմել: Գողացված անտառանյութերի խուզարկություններ կատարել, բռնագրավել վառելանյութեր և այլ անտառանյութեր: Անտառային հրդեհները հանգցնելու համար քաղաքացիներին օգնության կանչել. հսկել վորսորդության և բոլոր այլ տեսակի կողմնարդյունքների առթիվ սահմանված կանոնների անթերի կատարման վրա:

Հոդ. 49. Անտառային պահակախմբերը հսկում են, որ մեջսահմանագծերը և անտառտնտեսության նշանները, հեռախոսային գծերը, ցանկապատերը, առուները, ճանապարհները, անտառտնտեսական և անտառային շինությունները մնան անվնաս ինչպես նաև հնության հիշատակները:

Հոդ. 50. Անտառային պահախումբը հսկում է փայտեղենի պատրաստման կանոնների ճշգրիտ իրագործման, մասնակցում է պատրաստված անտառանյութեր, և հատման տեղերի ստուգումներին, հատաբաժինների հատկացման աշխատանքներին, անտառը խնամելու, անտառամշակության և այլ անտառատնտեսական ձեռնարկումներին, ինչպես և մասնակցում է անտառապրոպագանդային աշխատանքներին

Հոդ. 51. Անտառային պահախումբերը, իրենց հանձնված պահտշրջանը շրջելիս, անտառխախտումներին հետևելիս, գողացված նյութերը գանձելու նպատակով խուզարկություններ, ձերբակալություններ կատարելիս պարտավոր են կրելու սահմանված (հոդ. 53.) կրծքանշանները և իրեն տված զենքը ունենալ բարեկարգ վիճակում։

Հոդ. 52. Իր պաշտոնական պարտականությունները կատարելիս անտառային պահախումբն իրավունք ունի զենք գործածել.

ա) Հետ մղելու ամեն տեսակ զինված հարձակումներ կամ ճնշելու զինված դիմադրությունները։

բ) Հետ մղելու, թեկուզ վոչ զինված հարձակումները, վորոնք կկատարվեն մի քանի կամ մի մարդու կողմից, սակայն կատարված այնպիսի պայմաններում և հանգամաներում, յերբ անտառապահին սպառնալիս կլինի բացարձակ վտանգ, ինչպես և ձերբակալվածների փախուստի դեպքում։

գ) Անտառում թագնած բանդիտներին և գասալիքներին ձերբակալելու դեպքում, յերբ տեղեկան որգանի կողմից անտառի պահախումբը դրա համար կկանչվի։

**Ծանոթություն**— Անտառորենքները խաղտողների հետ ընդհարումների դեպ-

քում անտառային պահախումբը պետք ձեռք առնի բոլոր հնարավոր միջոցները զենքի չդիմել և այն գործ ածել միայն ծայրահեղ դեպքում:

Հոդ. 53. Անտառային պահախումբը ունի սահմանված հատուկ համազգեստ, պաշտոնյական հատուկ նշաններ կրծքի ու թևերի վրա:

Հոդ. 54. Հրդեհի վտանգ լինելու դեպքում անտառապահներին, առանց անտառապետի թույլտվության արգելվում է բացակայել իրեն վստահված անտառային պահբաժնից, բացի հարևան պահախմբին օգնության գնալու դեպքից:

Հոդ. 55. Անտառային պահախմբին արգելվում է ամեն տեսակի անտառարդյունաբերությամբ և անտառային նյութերի վերամշակությամբ զբաղվելը:

Հոդ. 56. Անտառային պահխմբին անտառապետի լիազորությամբ կարող է իրավունք տրվել անտառավարչության հաստատված նորմաների սահմաններում կատարել փայտի բացթողումներ և ստուգելու նախամթերումներն ու հատման տեղերը:

ԳԻՏՈՒԹՅ. ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0046771